ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 4-Ա

«24» հունվարի 2020թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի «գ» կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին>> N 633-Ն որոշման 4-րդ կետի «ե» և 6-րդ կետի «է» ենթակետերի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի հիմնական ցուցանիշները քաղաքացիական պաշտպանության վիճակի՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի տարահանված բնակչության և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմի սննդամթերքով ապահովման հաշվարկը՝ համաձայն N7 հավելվածի.

8) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի տարահանված բնակչության անհրաժեշտ հագուստի և առաջին անհրաժեշտության ապրանքների ապահովման հաշվարկը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ինժեներական ապահովման տեխնիկայի և տրանսպորտային միջոցների հաշվարկը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն N 10 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի աշխատակազմի ղեկավար՝ Սամվել Էգնատոսյանին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանի մեկ օրինակը տրամադրել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«24» հունվարի 2020 թվական
գյուղ Ամասիա